

Երեխաների ընթերցելու իրավունքները

1. Երեխաներն ունեն ընթերցանության **մարդու հիմնական իրավունք**:
2. Երեխաներն ունեն տպագիր և թվային ձևաչափով տեքստերի **հասանելիության** իրավունք:
3. Երեխաներն ունեն իրենց ընթերցանության նյութը **ընտրելու** իրավունք:
4. Երեխաներն իրավունք ունեն ընթերցելու այնպիսի տեքստեր, որոնք **արտացոլում** են իրենց փորձառությունները և լեզուները, **պատուհան** են տրամադրում դեպի ուրիշների կյանքը և **դռներ** բացում դեպի մեր բազմազան աշխարհը:
5. Երեխաներն իրավունք ունեն ընթերցել **հաճույքի** համար:
6. Երեխաներն ունեն բանիմաց ու գրագետ մարդկանց հետ միասին ընթերցանության **նպաստավոր** միջավայրերից օգտվելու իրավունք:
7. Երեխաներն իրավունք ունեն օգտվելու ընթերցանության համար հատկացված ընդլայնված **ժամանակից**:
8. Երեխաներն իրավունք ունեն ընթերցանության ընթացքում իրենց սովորածը **կիսել** ուրիշների հետ՝ տեղական ու համաշխարհային մակարդակով համագործակցելով ուրիշների հետ:
9. Երեխաներն իրավունք ունեն ընթերցանությունը օգտագործել որպես **հաղորդակցության** այլ ձևերի հետ կապող միջոց, ինչպիսիք են՝ գրելը, խոսելը և տեսողական ցուցադրումը:
10. Երեխաներն իրավունք ունեն օգտվելու կառավարությունների, գործակալությունների և կազմակերպությունների ֆինանսական ու նյութական միջոցներից, որոնք **աջակցում** են ընթերցանությանը և ընթերցանության ուսուցմանը: